



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N93

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N40 ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 28-րդ կետերով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 290 000 (երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N115-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N40 որոշման 1-ին, 2-րդ կետերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի

**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՍԱՐԱԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՄՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՒՑՈՒ ՊՈՒՑՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 64

2. Հատիկաբաժնե և պաշտոնային դրույքաչափերը

	ՀԱՄՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՀԱՄՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՊԱՇՏՈՒՑՈՒ ՊՈՒՑՔԱՉԱՓԸ /դրամ/	ԱՇԽԱՏԱՎԱՐՉ /դրամ/	ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵՎԱՐ ԱՇԽ. ՖՈՐՄԸ /դրամ/
	ՔԱՐԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1	290000	290000		3480000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	230000	230000		2760000
		2	520000	520000		6240000
ԸՆԴԱՄԵՆԸ						
			ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
3	Ազգային բնակավայրի վարչական ղեկավար	1	230000	230000		2760000
4	Լեռնավայրի բնակավայրի վարչական ղեկավար	1	170000	170000		2040000
5	Վարչական ղեկավարներ	7	150000	1050000		12600000
		9	550000	1450000		17400000
ԸՆԴԱՄԵՆԸ						
			ՀԱՅԵՐՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
6	Մանուկ բարոտուղար	1	150000	150000		1800000
		1	150000	150000		1800000
ԸՆԴԱՄԵՆԸ						
			ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
7	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	1	240000	240000		2880000
	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մեղրիի տարածքային բաժին					
8	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մեղրիի տարածքային բաժնի պետ	1	256623	256623		3079476
9	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մեղրիի տարածքային բաժնի առաջին կարգի մասնագետ	1	141500	141500		1698000

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժին

10	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ	1	220000	220000	2640000
11	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի գլխավոր մասնագետ	4	170000	680000	8160000
12	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի առաջատար մասնագետ	6	150000	900000	10800000

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և էկամոտների հավաքագրման բաժին

13	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և էկամոտների հավաքագրման բաժնի պետ	1	220000	220000	2640000
14	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և էկամոտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ	3	170000	510000	6120000
15	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և էկամոտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	3	150000	450000	5400000
16	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և էկամոտների հավաքագրման բաժնի առաջին կարգի մասնագետ	1	130000	130000	1560000

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժին

17	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի պետ	1	220000	220000	2640000
18	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ	3	170000	510000	6120000
19	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետ	3	150000	450000	5400000

20	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ	1	130000	130000	1560000
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին					
21	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ	1	220000	220000	2640000
ԸՆԴԱՄԵՆԸ		31	2738123	5278123	63337476
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՈՒՔ					
22	ՔՍԳ-ի պատասխանատու գործակար	1	160000	160000	1920000
23	Գործակար	1	130000	130000	1560000
24	Գործակար-քարտուղար	1	130000	130000	1560000
25	Օպերատոր Ազարակ վարչական նստավայրում	1	130000	130000	1560000
26	Օպերատոր վարչական նստավայրում	8	91275	730200	8762400
27	Ցանցային ադմինիստրատոր	1	150000	150000	1800000
28	Սպասարկող մասնագետ Լեհվազ բնակավայրում	1	91275	91275	1095300
29	Հավաքարար	1	135000	135000	1620000
30	Հավաքարար	1	91275	91275	1095300
31	Տնտեսակար-ցրիչ	1	91275	91275	1095300
32	Վարորդ	2	130000	260000	3120000
ԸՆԴԱՄԵՆԸ		19	1330100	2099025	25188300
Պայմանագրային աշխատողներ					
33	Անասնաբույժ	2	138000	276000	3312000
ԸՆԴԱՄԵՆԸ		2	138000	276000	3312000
ԸՆԴԱՄԵՆԸ		64		9773148	119271776

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Signature]





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N 94

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻՔ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ,
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N68 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով,
37-րդ հոդվածով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի
ավագանին

որոշում է՝

1. Հաստատել «Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի «« Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի
դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N68 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի



Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
Ավագանու « 26 » դեկտեմբերի
2019թ. թիվ 94 որոշման

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ<<ԱՐԵՎԻՔ>> ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ
ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

1.Աշխատակիցների քանակ՝ 56

2.Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Հաստիքի անվանումը	Հաս- տիքային միավոր	Դրույքաչափը ՀՀ դրամ	Հավելա վճար	Ամսական աշխ.	Ընդ.տարեկան աշխ. ֆոնդը
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	170 000-00	0	170 000-00	2 040 000-00
Փոխտնօրեն ուսումնական աշխատանքների գծով	2	107 000-00	0	214 000-00	2 568 000-00
ԸՆԴԱՄԵՆԸ	3			384 000-00	4 608 000-00
Մանկավարժական դրույքներ					
Դասատուներ	55,5	91 275-00	0	5 065 753-00	60 789 036-00
Դասատու	1	91 275-00	50 000-00	141 275-00	1 695 300-00
ԸՆԴԱՄԵՆԸ	56,5		50 000-00	5 207 028-00	62 484 336-00
Հաշվապահ	1	91 275-00	0	91 275-00	1 095 300-00
ԸՆԴԱՄԵՆԸ	1		0	91 275-00	1 095 300-00
Սպասարկող անձնակազմ					
Հանդերձապահ	0,5	91 275-00	0	45 638-00	547 656-00
Գործավար	2	91 275-00	0	182 550-00	2 190 600-00
Հավաքարար	2	91 275-00	0	182 550-00	2 190 600-00
Բանվոր	2	91 275-00	0	182 550-00	2 190 600-00
Գրադարանավար	1	91 275-00	0	91 275-00	1 095 300-00
ԸՆԴԱՄԵՆԸ	7,5		0	684 563-00	8 214 756-00
ԸՆԴԱՄԵՆԸ	68		50 000-00	6 366 866-00	76 402 392-00

Դպրոցի տնօրեն՝  Հ.Մարկոսյան

Համայնքի ղեկավար՝

 Մ.Զարյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N95

«ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N116-Ա ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ
ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

1) Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կարճևանի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.1-ի.

2) Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Ավանքի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N116-Ա որոշման 3-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի



հավելված 1
 ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
 համայնքի ավագանու
 2020 թվականի *հունվարի 26*
 N 95 որոշման

<<Ագարակի մանկապարտեզ >> ՀՈԱԿ
ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

1. Աշխատակիցների քանակը՝ 46
 2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելվածար	Ամսական աշխատավ.	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդ.
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	170000		170000	2040000
Մեթոդիստ ուս. գծ. տն. տեղ.	1	118700		118700	1424400
Ընդամենը	2			288700	3464400
Մանկավարժական դրույքները					
Դաստիարակ	10,0	134900		1349000	16188000
Լր. կրթ. ծառ. մանկ.	1	107900		107900	1294800
Երաժշտ. դաստիարակ	2	107900		215800	2589600
Ֆիզ. դաստիարակ	1	107900		107900	1294800
Ընդամենը	14,0			1780600	21367200
Հաշվապահ	1	110700		110700	1328400
Ընդամենը	1			110700	1328400
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	8,8	104400		918720	11024640
Գործավար	1	110700		110700	1328400
Բուժքույր	1,5	114000		171000	2052000
Խոհարար	1	112900		112900	1354800
Խոհարարի օգնական	1	107900		107900	1294800
Դերձակ	1	91275		91275	1095300
Լվացքարար	1	91275		91275	1095300
Տնտեսվար	0,5	91275		45638	547656
Պահեստապետ	1	96600		96600	1159200
Օժանդակ բանվոր	1	91275		91275	1095300
Օժանդակ բան./դրնապան/	1	91275		91275	1095300
Շենք. սարք. սպ. և նոր. բան.	1	91275		91275	1095300
Հավաքարար	1	91275		91275	1095300
Այգեպան	1	91275		91275	1095300
Ընդամենը	21,8			2202383	26428596
Ընդամենը	38,80			4382383	52588596



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

/Ա. Կարապետյան/

/Ա. Մարգարյան/



Ս. ԶԱԲԱՐՑԱՆ

հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու
2029 թվականի 26-ի
N 95 որոշման

**<<Ագարակի մանկապարտեզ >> ՀՈԱԿ
Կարճևանի մասնաճյուղ**

**ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ**

1. Աշխատակիցների քանակը՝ 4
2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդ.
Մանկավարժական դրույքները					
Ղեկավար/դաստիարակ/ դաստիարակ	1 0,4	108000 100000		96600 40000	1159200 480000
Ընդամենը	1,4			136600	1639200
Ընդամենը					
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	1	91275		91275	1095300
Խոհարար	1	91275		91275	1095300
Ընդամենը	2			182550	2190600
Ընդամենը	3,4			319150	3829800

Տնօրեն՝

հաշվապահ՝

/ Ա. Կարապետյան /

/ Ա. Մարգարյան /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 26-ի
N 95 որոշման

<<Ագարակի մանկապարտեզ >> ՀՈԱԿ
Ալվանքի մասնաճյուղ

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

1. Աշխատակիցների քանակը՝ 1
2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելվածար	Ամսական աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդ.
Դաստիարակ	0,5	91275		45638,0	547656

Տնօրեն՝

հաշվապահ՝

/ Ա. Կարապետյան /

/ Ա. Մարգարյան /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N96

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N116-Ա ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ
ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

1) Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Լեհվազի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.1-ի:

2) Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիժորի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N116-Ա որոշման 4-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Signature] Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի





հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու

2019թ. հոկտեմբերի 26
թ. որոշման

**ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ
<<Մեղրի համայնքի մանկապարտեզ> ՀՈԱԿ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 45

2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային և միավորների ի թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	170000		170000	2040000
Մեթոդիստ ուս. գծ. տն. տեղ.	1	118700		118700	1424400
Ընդամենը	2			288700	3464400
Մանկավարժական դրույքներ					
Դաստիարակ	10	134900		1349000	16188000
Լր. կրթ. ծառ. մանկ.	1	107900		107900	1294800
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	107900		107900	1294800
Երաժշտ. դաստիարակ	2	107900		215800	2589600
Ընդամենը	14			1780600	21367200
Հաշվապահ	1	110700		110700	1328400
Ընդամենը	1		0	110700	1328400
Սպասարկող անձնակազմ					0
Դաստիարակի օգնական	8,8	104400		918720	11024640
Գործավար	1	110700		110700	1328400
Բուժքույր	1,5	114000		171000	2052000
Խոհարար	1	112900		112900	1354800
Խոհարարի օգնական	1	107900		107900	1294800
Դերձակ	1	91275		91275	1095300
Պահակ	1	91275		91275	1095300
Լվացքարար	1	91275		91275	1095300
Տնտեսվար	0,5	91275		45638	547650
Պահեստապետ	1	96600		96600	1159200
Օժանդակ բանվոր	1	91275		91275	1095300
Շենք. սարք. սպ. և նոր. բան.	1	91275		91275	1095300
Հավաքարար	1	91275		91275	1095300
Այգեպան	1	91275		91275	1095300
Ընդամենը	21,8		0	2202383	26428590
Ընդամենը	38,8		0	4382383	52588590

Տնօրեն
Հաշվապահ

/Սյունիքի մարզի
/Սիրանուշ Գրիգորյան/

հավելյալ 1-ի
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու
համայնքի ապագանու

2019թ. Դեկտեմբերի 26-ի
N 96 որոշման



ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

ԼԵՀՎԱԶԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7
Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային և միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Մանկավարժական դրույքներ					
Մասնաճյուղի ղեկավար	1	108000		108000	1296000
Դաստիարակ	1	100000		100000	1200000
Երաժշտ. դաստիարակ	0,25	91275		22819	273825
Ընդամենը	2,25			230819	2769825
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	2	91275		182550	2190600
Բուժքույր	0,25	91275		22819	273825
Խոհարար	1	91275		91275	1095300
Ընդամենը	3,25		0	296644	3559725
Ընդամենը	5,5		0	527463	6329550

Տնօրեն

/Սյուլան Սարգսյան/

Հաշվապահ

/Սիրանուշ Գրիգորյան/



հավելված 1.2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու
համայնքի ավագանու

2019թ. դեկտեմբերի 26-ի
N-96 որոշման



ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

ՎԱՐԴԱՆԻՉՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչփերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Մանկավարժական դրույքներ					
Մասնաճյուղի ղեկավար	1	108000	0	108000	1296000
Դաստիարակ	0,5	100000	0	50000	600000
Երաժշտ. դաստիարակ	0,25	91275	0	22819	273825
Ընդամենը	1,75			180819	2169825
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	1	91275	0	91275	1095300
Բուժքույր	0,25	91275	0	22819	273825
Խոհարար	1	91275	0	91275	1095300
Ընդամենը	2,25		0	205369	2464425
Ընդամենը	4		0	386188	4634250

Տնօրեն
Հաշվապահ




/Սյուզան Սարգսյան/
/Սիրանուշ Գրիգորյան/





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N97

«ՄԵՂՐԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N116-Ա ՈՐՈՇՄԱՆ 5-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N116-Ա որոշման 5-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի



Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի

Մեղրի համայնքի ավագանու

2019թ. 4-րդ եռամսյակի 26-ի

№ 94 որոշման

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՄԵՂՐԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-ի
ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ
2020թ

1. Աշխատակիցների քանակ՝ 26

2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Հ/Հ	Հաստիքների անվանումը	Հաստիք. միավոր	Դրույքա-չափը	Ամսական աշխատա-վարձ	Ընդամենը Տարեկան աշխ. ֆոնդ
1	Տնօրեն	1	170 000	170 000	2 040 000
2	Տնօրենի տեղ. գրադար.գծով	1	98 700	98 700	1 184 400
3	Մեթոդիստ	0.5	91 275	45 638	547 656
4	Կազմակերպիչ	0.5	91 275	45 638	547 656
5	Գեղմասվար	0.5	91 275	45 638	547 656
6	Երգի ստուդ. դասուսույց	0.5	91 275	45 638	547 656
7	Պարսկ. լեզվի դասուսույց	1	91 275	91 275	1 095 300
8	Հնչյունային օպերատոր	0.5	91 275	45 638	547 656
9	Գրադարանավար	2.5	91 275	228 188	2 738 256
10	Մարզիչ ֆուտբոլի	2	91 275	182 550	2 190 600
11	Բուժքույր	0.5	91 275	45 638	547 656
12	Հաշվապահ	0.5	91 275	45 638	547 656
13	Գործավար	0.5	91 275	45 638	547 656
14	Տնտեսվար	1	91 275	91 275	1 095 300
15	Հսկիչ-բանվոր	1.5	91 275	136 912	1 642 944
16	Հավաքարար	4.5	91 275	410 738	4 928 856
	ԸՆԴԱՄԵՆԸ	18.5		1 774 742	21 296 904

<<ՄԵՂՐԻ ՄԱՐԶ>> ՀՈԱԿ-ի

տնօրենի օ/պ՝

հաշվապահ՝

Մեղրի համայնքի ղեկավար՝



Handwritten signature in blue ink.

/ Է. Ավետիսյան /

/Ա. Ստեփանյան/

/ Մ. Զաքարյան /





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N 98

«ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N116-Ա ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N116-Ա որոշման 6-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 26

ք. Մեղրի

**«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ**

1. Աշխատակիցների քանակը՝ 89 մարդ

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Լրացուցիչամս. աշխատավարձ	Ամսական աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդը
Տնօրեն	1	220000		220000	2640000
Տեղակալ	2	155700		311400	3736800
Ճարտարագետ	1	153700		153700	1844400
Հաշվապահ	1	118700		118700	1424400
Գնումների մասնագետ	1	113700		113700	1364400
Գործավար	1	91275		91275	1095300
Օպերատոր	1	91275		91275	1095300
Հսկիչ	4	91275		365100	4381200
Վարորդ	20	153700		3074000	36888000
Բանվոր	35	153700		5379500	64554000
Մեխանիզատոր	2	153700		307400	3688800
Աշխ.ղեկ	1	153700		153700	1844400
Էլեկտրիկ-փականագործ	1	138700		138700	1664400
Էլեկտրիկ	1	153700		153700	1844400
Հավաքարար	15	103700		1555500	18666000
Մեխանիկ-փականագործ	1	153700		153700	1844400
Պլաստիկ աղբի վերամշակող մասնագետ	1	153700		153700	1844400
ԸՆԴԱՄԵՆԸ	89		1400000	12535050	167220600

Տնօրեն

Ս.Սարգսյան

Հաշվապահ

Ա.Սամվելյան

Համայնքի ղեկավար՝

Ս.Չաքարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2019 թվականի N99-Ն

**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Աղքատության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ, 14-րդ հոդվածների դրույթներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 10-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ ԱՆ Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետական փորձագիտական եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու նպատակով սահմանել հետևյալ գոտիավորումները.
 - 1) 1-ին գոտի՝ ընդգրկում է Մեղրի, Ագարակ քաղաքները և Մ-2 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածքը.
 - 2) 2-րդ գոտի՝ ընդգրկում է Կարճևան, Լեհվազ գյուղերը.
 - 3) 3-րդ գոտի՝ ընդգրկում է Շվանիձոր, Ալվանք, Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր գյուղերը.
 - 4) 4-րդ գոտի՝ ընդգրկում է Լիճք, Տաշտուն, Նոնաձոր, Վահրավար, Կուրիս, Գուղեմնիս գյուղերը:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2020 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 3-ի:
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 26
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար.
4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.
7. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.
8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.
9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
10. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
11. քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.

12. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների.
13. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.
14. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
15. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար.
16. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար.
17. համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար:
18. համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/Հ	Տեղական տուրքերի անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝	
	1) Հիմնական շենքերի և շինությունների համար՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15000 (տասնհինգ հազար)
	2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	30000 (երեսուն հազար)
	բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000 (հիսուն հազար)
	գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000 (հիսուն հազար)
	դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	100000 (մեկ հարյուր հազար)

	3) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար` ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	3000 (երեք հազար)
	բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	5000 (հինգ հազար)
1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 1 գործակից 2-րդ, 3-րդ, 4-րդ գոտիների համար (Կարճևան, Լեռվազ, Շվանիձոր, Ալվանք, Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր, Լիճք, Տաշտուն, Նոնաձոր, Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից		
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`	
	1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն	3000 (երեք հազար)
	2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1)-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն սույն հավելվածի 1-ին կետի 1)-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը` շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով	
	3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1)-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն	5000 (հինգ

	չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	հազար)
4.	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200000 (երկու հարյուր հազար)
5.	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	60000 (վաթսուն հազար)
6.	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50000 (հիսուն հազար)
7.	1)Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	8000 (ութ հազար)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13000 (տասներեք հազար)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20000 (քսան հազար)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25000 (քսանհինգ հազար)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	30000 (երեսուն հազար)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ	50000

	հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	(հիսուն հազար)
1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 1 գործակից 2-րդ գոտու համար (Կարճևան և Լեհվազ գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,75 գործակից 3-րդ գոտու համար (Շվանիձոր, Ալվանք, Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,5 գործակից 4-րդ գոտու համար (Լիճք, Տաշտուն, Նոնաձոր, Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից		
	2)Համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	6000 (վեց հազար)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	12000 (տասներկու հազար)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	15000 (տասնհինգ հազար)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25000 (քսանհինգ հազար)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	40000 (քառասուն հազար)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	50000 (հիսուն հազար)

1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 1 գործակից
 2-րդ գոտու համար (Կարճևան և Լեհվազ գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,75 գործակից
 3-րդ գոտու համար (Շվանիձոր, Ավանք, Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,5 գործակից
 4-րդ գոտու համար (Լիճք, Տաշտուն, Նոնաձոր, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից

8.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար, մեկ քառակուսի մետրի համար	350 (երեք հարյուր հիսուն)
9.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
	1) առևտրի օբյեկտների համար	40000 (քառասուն հազար)
	2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	60000 (վաթսուն հազար)
	3) բաղնիքների (սաունաների) համար	200000 (երկու հարյուր հազար)
	4) խաղատների կազմակերպման համար	700000 (յոթ հարյուր հազար)
	5) շահումներով խաղերի կազմակերպման համար	350000 (երեք հարյուր հիսուն հազար)
	6) վիճակախաղերի կազմակերպման համար	150000 (մեկ հարյուր հիսուն)

		հազար)
10.	Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
	1) հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4000 (չորս հազար)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8000 (ութ հազար)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	12000 (տասներկու հազար)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	16000 (տասնվեց հազար)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	21000 (քսանմեկ հազար)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	31000 (երեսունմեկ հազար)
	2) ոչ հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1000 (մեկ հազար)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1500 (մեկ հազար հինգ հարյուր)

	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	2500 (երկու հազար հինգ հարյուր)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4500 (չորս հազար հինգ հարյուր)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8500 (ութ հազար հինգ հարյուր)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	16000 (տասնվեց հազար)
1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 1 գործակից 2-րդ գոտու համար (Կարճևան և Լեհվազ գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,75 գործակից 3-րդ գոտու համար (Շվանիձոր, Ավանք, Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,5 գործակից 4-րդ գոտու համար (Լիճք, Տաշտուն, Նոնաձոր, Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից		
11.	Համայնքի քաղաքային բնակավայրերում տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	5000 (հինգ հազար)
12.	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
	1) ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2000 (երկու

		հազար)
	2) թունդ ակտիվային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	3500 (երեք հազար հինգ հարյուր)
	3) սոցիալական գովազդի համար	0
	4) այլ արտաքին գովազդի համար	1500 (մեկ հազար հինգ հարյուր)
	5) դատարկ գովազդային վահանակների համար	375 (երեք հարյուր յոթանասուն հինգ)
	6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	150 (մեկ հարյուր հիսուն)
13.	Մեդրի համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	100000 (մեկ հարյուր հազար)
14.	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10000 (տասը հազար)
15.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	500000 (հինգ հարյուր հազար)

1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,5 գործակից 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտու համար (Կարճևան և Լեհվազ, Շվանիձոր, Ալվանք, Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր Վահրավար, Կուրիս, Գուդեմնիս, Լիճք, Տաշտուն և Նոնաձոր գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից		
16.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝	
	1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)
	2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5000000 (հինգ միլիոն)
	3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	7000000 (յոթ միլիոն)
	4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	10000000 (տասը միլիոն)
1-ին գոտու համար (Մեղրի և Ագարակ քաղաքներ, Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարակից տարածք) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,5 գործակից 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիների համար (Կարճևան և Լեհվազ, Շվանիձոր, Ալվանք, Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր Վահրավար, Կուրիս, Գուդեմնիս, Լիճք, Տաշտուն և Նոնաձոր գյուղեր) կիրառել դրույքաչափի նկատմամբ 0,3 գործակից		
17.	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝	50000 (հիսուն հազար)
18.	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
	1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացույցային տարվա համար՝	15000 (տասնհինգ հազար)
	2) հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝	200000 (երկու հարյուր հազար)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար.
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.
6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար.
7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.
8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.
9. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար.
10. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.
11. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար.
12. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար.

13. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար.
14. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.
15. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.
16. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
 - 1) քաղաքային բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
 - 2) գյուղական բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ.
 - 3) իրավաբանական անձանց համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
 - 1) քաղաքային բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
 - 2) գյուղական բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ.
 - 3) իրավաբանական անձանց համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
 - 1) ոչ գյուղ նշանակության հողերի համար՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ.
 - 2) գյուղ նշանակության հողերի համար՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ.
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ.

7. Համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4. 1-ի.
8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝
 - 1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, կամ
 - 2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:
9. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ.
10. Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ մեկ ուսումնական տարվա համար 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, և համայնքում աճնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում չունեցող օգտվողների համար՝ (բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող զինծառայողների երեխաներ) 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
11. Համայնքային ենթակայության <<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻՔ>> ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար մեկ ուսումնական տարվա համար ըստ բաժինների՝
 - 1) Դաշնամուրային բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
 - 2) Վոկալ բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
 - 3) Լարային բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
